

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2015

ՖԻԶԻԿԱ

ԹԵՍ 8

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույթի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույթը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանար պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարություն: Պատասխանների ճնարդի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1

Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:


Հաշվարկման համակարգը կազմված է ...

- 1) հաշվարկման մարմնից, նրա հետ կապված կոռորդինատային համակարգից և ուսումնասիրվող մարմնից:
- 2) հաշվարկման մարմնից, նրան կապված կոռորդինատային համակարգից և ժամանակը չափող սարքից:
- 3) կոռորդինատային համակարգից և ժամանակը չափող սարքից:
- 4) կոռորդինատային համակարգից և ուսումնասիրվող մարմնից:

2

Նկարում պատկերված է ուղղագիծ շարժվող ավտոմեքենայի արագության մոդուլի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը:
Որքա՞ն է ավտոմեքենայի արագացման մոդուլը:

- 1) 4 м/վ^2 :
- 2) 6 м/վ^2 :
- 3) 16 м/վ^2 :
- 4) 1 м/վ^2 :



3

Մարմնի արագության պրոյեկցիան ներկայացված է $v_x = 2 + t$ հավասարմամբ, որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Ի՞նչ բանաձևով է որոշվում տեղափոխության պրոյեկցիան այդ շարժման դեպքում:

- 1) $S_x = 2 + \frac{t^2}{2}$:
- 2) $S_x = \frac{t^2}{2}$:
- 3) $S_x = 2t + \frac{t^2}{2}$:
- 4) $S_x = 2 + t^2$:


4

Ա և Բ մարմինները նետել են հորիզոնի նկատմամբ տարրեր անկյան տակ՝ տարրեր սկզբնական արագություններով, ինչպես ցույց է տրված նկարում:

Թոփիքի առավելագույն բարձրությունում ո՞ր մարմնի


արագությունը կլինի ավելի մեծ: Օդի դիմադրությունն անտեսել:

- 1) Բ մարմնի:
- 2) Հավասար են:
- 3) Հարցին հնարավոր չէ միանշանակ պատասխան տալ:
- 4) Ա մարմնի:



5

Նկարում պատկերված են հաշվարկման իներցիալ համակարգում ժամանակից՝ արագության մոդուլի կախումն արտահայտող գրաֆիկները տարբեր մարմինների համար, որոնք շարժվում են միևնույն ուժի ազդեցությամբ: Ըստ գրաֆիկի՝ ո՞ր մարմնի զանգվածն է ամենամեծը:



- 1) p:
- 2) q:
- 3) Բոլոր մարմինների զանգվածները հավասար են:
- 4) ω:

6


Ո՞ր մարմինների միջև են գործում գրավիտացիոն ուժերը:

- 1) Միայն նյութական կետերի:
- 2) Միայն նյութական կետերի և գնդաձև մարմինների:
- 3) Միայն նյութական կետերի և համասեռ գնդերի:
- 4) Կամայական մարմինների:

7

Ի՞նչ ուղղություն ունի նկարում պատկերված մարմնի վրա ազդող չորս ուժերի \vec{R} համագորը:

- 1) \vec{R}
- 2) \vec{R}
- 3) \vec{R}
- 4) \vec{R}




8

Երկու հենարանների վրա դրված L երկարությամբ AB անկշիռ ձողի

Ա ծայրից s հեռավորությամբ կետում

ձողին ուղղահայաց ազդում է F ուժը:

Որքա՞ն է B հենարանի հակազդեցության ուժը:



- 1) $\frac{FL}{s}:$
- 2) $\frac{Fs}{L}:$
- 3) $\frac{FL}{s-L}:$
- 4) $\frac{F(L-s)}{L}:$

9


Սիևույն ճնշման ուժն առաջին դեպքում ազդում է S մակերեսի վրա, իսկ երկրորդ դեպքում՝ 3 անգամ մեծ մակերեսի վրա: Ո՞ր դեպքում է ճնշումն ավելի մեծ և քանի՞ անգամ:

- 1) Երկրորդ դեպքում և 3 անգամ:
- 2) Առաջին դեպքում և 9 անգամ:
- 3) Երկրորդ դեպքում և 9 անգամ:
- 4) Առաջին դեպքում և 3 անգամ:

10

Յուրաքանչյուրը d հաստությամբ չորս միատեսակ նրբատախտակներից հավաքված չորսուն լորում է ջրում՝ կիսով չափ ընկղմվելով նրա մեջ: Որքանո՞վ կփոքրանա ընկղման խորությունը, եթե չորսուից հեռացնենք նրբատախտակներից մեկը:

- 1) d -ով:
- 2) $1,5d$ -ով:
- 3) $2d$ -ով:
- 4) $0,5d$ -ով:



11

Որտե՞՞ղ ավելի շատ մոլեկուլ կա՝ մեկ մոլ ջրածնո՞ւմ, թե՞ մեկ մոլ ջրում:

- 1) Մեկ մոլ ջրում:
- 2) Մոլեկուլների թվերը հավասար են:
- 3) Պատասխանը կախված է ջրի ազբեզգատային վիճակից:
- 4) Մեկ մոլ ջրածնում:

12

Ո՞րն է իդեալական գազի p ճնշման ճիշտ արտահայտությունը՝ կախված մոլեկուլների ջերմային շարժման \bar{E} միջին կինետիկ էներգիայից և n կոնցենտրացիայից:

- 1) $p = \frac{\bar{E}}{n} :$
- 2) $p = \frac{2}{3} n \bar{E} :$
- 3) $p = \frac{n}{\bar{E}} :$
- 4) $p = n \bar{E} :$

13

Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Եթե երկու իդեալական գազերի ջերմաստիճանները հավասար են, ապա հավասար են նաև դրանց...

- 1) մասնիկների քասային շարժման միջին արագությունները:
- 2) ճնշումները:
- 3) խտությունները:
- 4) մասնիկների քասային շարժման միջին կինետիկ էներգիաները:

14

Ինչպե՞ս է արտահայտվում ջերմադինամիկայի առաջին օրենքն իդեալական գազի իզոթերմ սեղման դեպքում: A -ն արտաքին ուժերի կատարած աշխատանքն է, Q -ն՝ գազից շրջապատին հաղորդված ջերմաքանակը, ΔU -ն՝ գազի ներքին էներգիայի փոփոխությունը:

- 1) $Q = A$:
- 2) $Q = \Delta U$:
- 3) $\Delta U = -A$:
- 4) $\Delta U = A$:

15

Օդում պարունակվող ջրի գոլորշու ճնշումը p է, իսկ նույն ջերմաստիճանի ջրի հազեցած գոլորշու ճնշումը՝ p_0 : Ω° թ է օդի հարաբերական φ խոնավության ճիշտ բանաձևը:

- 1) $\varphi = \frac{p - p_0}{p_0} \cdot 100\%$:
- 2) $\varphi = \frac{p_0}{p} \cdot 100\%$:
- 3) $\varphi = \frac{p}{p_0 - p} \cdot 100\%$:
- 4) $\varphi = \frac{p}{p_0} \cdot 100\%$:

16

Ի՞նչ ազրեգատային վիճակում է ջուրը 0°C ջերմաստիճանում:

- 1) Սիայն պինդ:
- 2) Հնարավոր է լինի թե պինդ վիճակում, թե հեղուկ:
- 3) Սիայն գազային:
- 4) Սիայն հեղուկ:

17

Ի՞նչ միավորով է չափվում մակերևութային լարվածության գործակիցը միավորների ՄՀ-ում :

- 1) 1 N/m :
- 2) 1 Q/m^3 :
- 3) 1 Q/m :
- 4) 1 N/m^2 :

18

Ի՞նչ ֆիզիկական հատկությամբ է միաբյուրեղը տարբերվում ամորֆ մարմնից:

- 1) Թափանցիկությամբ:
- 2) Ամրությամբ:
- 3) Էլեկտրահաղորդականությամբ:
- 4) Անիզոտրոպությամբ:

19

Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Ամպերաչափը միացնում են շղթայի տեղամասին հաջորդաբար:
- 2) Ամպերաչափը միացնում են շղթայի տեղամասին զուգահեռ:
- 3) Ամպերաչափը նախատեսված է հոսանք չափելու համար:
- 4) Ամպերաչափի դիմադրությունը պետք է շատ փոքր լինի այն տեղամասի դիմադրությունից, որին միացված է:

20

Նկարում պատկերված շղթայի ծայրերին կիրառված է U_0 լարում: Որքա՞ն է $2R$ դիմադրության ծայրերին լարման անկումը:

- 1) U_0 :
- 2) $\frac{U_0}{3}$:
- 3) $\frac{2U_0}{3}$:
- 4) $3U_0$:



21

Ե՞րբ է հաստատուն հոսանքի աղբյուր պարունակող փակ շղթայի արտաքին տեղամասում անջատված հզորությունն ընդունում իր առավելագույն արժեքը: Արտաքին տեղամասի դիմադրությունը R է, հոսանքի աղբյուրի ներքին դիմադրությունը՝ r :

- 1) $R = 2r$:
- 2) $R = r$:
- 3) $r \ll R$:
- 4) $r \leq R$:

22


m զանգվածով և *q* լիցրով մասնիկը *v* արագությամբ մտնում է համասեռ մագնիսական դաշտ՝ նրա ինդուկցիայի գծերի նկատմամբ α անկյան տակ: Որքա՞ն է մագնիսական դաշտի ինդուկցիայի նողուլը, եթե պարուրագծի շառավիղը, որով շարժվում է մասնիկը, R է:

- 1) $\frac{mv \sin \alpha}{qR}$:
- 2) $\frac{mv}{qR \sin \alpha}$:
- 3) $\frac{mv}{qR}$:
- 4) $\frac{mv \cos \alpha}{qR}$:

23

Նկարում պատկերված է շրջանակ թափանցող մագնիսական հոսքի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ժամանակի ո՞ր միջակայքում շրջանակում մակածված էլՇՈւ-ի մոդուլը կունենա ամենամեծ արժեքը:

- 1) 4-8 վ միջակայքում:
- 2) 8-9 վ միջակայքում:
- 3) 9-12 վ միջակայքում:
- 4) 0-4 վ միջակայքում:



24

Ի՞նչ էներգիայով է օժտված տատանողական կոնտուրն այն պահին, երբ կոնդենսատորի լիցքն առավելագույնն է:

- 1) Սիայն մագնիսական դաշտի էներգիայով:
- 2) Էլեկտրական և մագնիսական դաշտերի էներգիաներով:
- 3) Էներգիայով օժտված չէ:
- 4) Սիայն էլեկտրական դաշտի էներգիայով:

25

Տատանողական կոնտուրում ազատ էլեկտրամագնիսական տատանումների հաճախությունը ν է, կոճի ինդուկտիվությունը՝ L : Ω^2 բանաձևով կարելի է հաշվել կոնտուրի կոնդենսատորի էլեկտրաունակությունը:

- 1) $C = \frac{1}{2\pi^2 \sqrt{L\nu}}$:
- 2) $C = 4\pi^2 L\nu^2$:
- 3) $C = 2\pi^2 \sqrt{L\nu}$:
- 4) $C = \frac{1}{4\pi^2 L\nu^2}$:

26

Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Փոփոխական սինուսոիդական հոսանքի ուժի գործող արժեքը ...

- 1) $\sqrt{2}$ անգամ մեծ է հոսանքի ուժի լայնութային արժեքից:
- 2) Հավասար է հոսանքի ուժի լայնութային արժեքին:
- 3) Զրոն է:
- 4) $\sqrt{2}$ անգամ փոքր է հոսանքի ուժի լայնութային արժեքից:

27

Առարկայի հեռավորությունը հարք հայելուց d է: Որքա՞ն է առարկայի և պատկերի միջև l հեռավորությունը:

- 1) $l = 2d$:
- 2) $l < d$:
- 3) $l > 2d$:
- 4) $l = d$:

28

Նո՞յնն է արդյոք հավաքող բարակ ոսպնյակի կիզակետային հեռավորությունը կարմիր և կապույտ ճառագայթների համար:

- 1) Կապույտի համար ավելի մեծ է:
- 2) Նույնն է:
- 3) Պատասխանը կախված է ապակու տեսակից:
- 4) Կարմիրի համար ավելի մեծ է:

29

Ո՞ր երևոյթն է ապացուցում լույսի ալիքային բնույթը:

- 1) Լույսի ուղղագիծ տարածումը:
- 2) Լույսի անդրադարձումը:
- 3) Լույսի ինտերֆերենցը:
- 4) Լույսի բեկումը:

30

Ո՞րն է լույսի կոհերենտ ալիքների ինտերֆերենցային մաքսիմումի պայմանը: Δ -ն ալիքների ընթացքի տարրերությունն է, λ -ն՝ ալիքի երկարությունը, m -ն ամբողջ թիվ է:

- 1) $\Delta = \left(m + \frac{1}{2} \right) \lambda$:
- 2) $\Delta = \frac{1}{2} m \lambda$:
- 3) $\Delta = \frac{\lambda}{m}$:
- 4) $\Delta = m \lambda$:

31

Երկայնակա՞ն, թե՞ լայնական է լուսային ալիքը:

- 1) Երկայնական է:
- 2) Հնարավոր է լինի երկայնական կամ լայնական:
- 3) Ω՛չ երկայնական է, ո՛չ լայնական:
- 4) Լայնական է:

32

Ո՞ր ֆիզիկական մեծությունը կախված չէ հաշվարկման համակարգի ընտրությունից:

- 1) Մարմնի գծային չափերը:
- 2) Երկու մարմինների միջև հեռավորությունը:
- 3) Երկու պատահարների միջև ժամանակահատվածը:
- 4) Վակուումում էլեկտրամագնիսական ալիքի տարածման արագությունը:

33

Ֆոտոնի իմպուլսը p է: Որքա՞ն է նրա էներգիան:

- 1) $E = \frac{p}{c}$:
- 2) $E = \frac{p}{c^2}$:
- 3) $E = pc^2$:
- 4) $E = pc$:

34

Սեկուսացված էլեկտրաչեղոք ցինկե թիթեղը լուսավորում են անդրմանուշակագույն ճառագայթումով: Ի՞նչ նշանի լիցք է ձեռք բերում թիթեղը:

- 1) Բացասական:
- 2) Չի լիցքավորվում:
- 3) Կամայական նշանի լիցք:
- 4) Դրական:

35

Ո՞ր նախադասությունն է ճիշտ արտահայտում Քորի առաջին կանխադրույթը:

- 1) Էլեկտրոնը միջուկի շուրջ կարող է պտտվել միայն որոշակի ստացիոնար ուղեծրերով, որոնցով շարժվելիս այն չի ճառագայթում:
- 2) Էլեկտրոնն ատոմում մի ստացիոնար վիճակից մյուսին անցնելիս ճառագայթում կամ կլանում է ֆոտոն:
- 3) Ատոմում դրական լիցքը կենտրոնացված է նրա միջուկում:
- 4) Ատոմը կազմված է միջուկից և նրա շուրջը պտտվող էլեկտրոններից:

36

Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:


Համաձայն Թումսոնի մոդելի՝ ատոմը ...

- 1) գունդ է, որի ներսում կան պրոտոններ և էլեկտրոններ:
- 2) Էլեկտրաչեղոք գունդ է, որի ներսում կան էլեկտրոններ:
- 3) դրական լիցքավորված գունդ է, որի ներսում կան էլեկտրոններ:
- 4) կազմված է դրական լիցքավորված միջուկից, որի շուրջը պտտվում են էլեկտրոններ:

37

Նկարում պատկերված է ատոմի էներգիական մակարդակների դիագրամը: Ո՞ր անցման դեպքում է ատոմի ճառագայթած ալիքի հաճախությունն առավելացույնը:

- 1) $E_4 \rightarrow E_3$:
- 2) $E_1 \rightarrow E_3$:
- 3) $E_4 \rightarrow E_1$:
- 4) $E_2 \rightarrow E_3$:



38

Ի՞նչ միջուկ է առաջանում $^{14}_7N + ^4_2He \rightarrow ? + ^1_1H$ ռեակցիայի հետևանքով, եթե ազոտի միջուկը ոմբակոծվում է α -մասնիկով:

- 1) $^{16}_8O$:
- 2) $^{19}_9F$:
- 3) $^{20}_{10}Ne$:
- 4) $^{17}_8O$:

39

Որքա՞ն է այն միջուկի կարգաթիվը, որը ստացվում է Z կարգաթիվ ունեցող միջուկի α տրոհման հետևանքով:

- 1) $Z - 2$:
- 2) $Z - 4$:
- 3) $Z + 1$:
- 4) $Z - 1$:

40

Փոխազդեցության ժամանակ նույնականացնելու համար մասնիկներ են փոխանակում միջուկում:

- 1) π-մեզոնիներ:
- 2) Εյուոններ:
- 3) Նեյտրիոններ:
- 4) Λեկտրոններ:

41

Որքա՞ն է հոսանքի աղբյուրի ԷՇՈՒ-ն, եթե կողմնակի ուժերը հոսանքի աղբյուրում 10 Կլ լիցքը մի քետից մյուսը տեղափոխելիս կատարում են 20 Ω աշխատանք:

42

Որքա՞ն է դիֆրակտային ցանցի հաստատունը, եթե այն 1մմ-ի վրա ունի 500 նրբագիծ: Պատասխանը քազմապատկել 10^6 -ով:

43

Որքա՞ն էներգիա է կորցնում ատոմը, եթե էլեկտրոնը մի ստացիոնար ուղեծրից մյուսին անցնելիս ճառագայթում է $5 \cdot 10^{14}$ Հց հաճախությամբ ֆոտոն: Պլանկի հաստատունը $6,6 \cdot 10^{-34}$ ՋՎ է: Պատասխանը բազմապատկել 10^{20} -ով:

44

Որքանո՞վ կավելանա 8000 Պա ճնշման տակ իդեալական գազի ճնշումը, եթե գազի ջերմաստիճանը 37°C -ից իզոխոր կերպով բարձրացվի մինչև 68°C :

45

v_0 արագությամբ շարժվող m զանգվածով գունդը բախվում է նույն զանգվածով անշարժ գնդին և նրա հետ շարժվում համատեղ: Հաստատե՛ք կամ Ժխտե՛ք հետևյալ պնդումները:

1. Բախման արդյունքում համակարգի մեխանիկական էներգիան չի փոխվում:
2. Բախումից հետո համակարգի ընդհանուր կինետիկ էներգիան $mv_0^2/4$ է:
3. Բախման հետևանքով սկզբնական կինետիկ էներգիայի կեսը փոխակերպվում է գնդերի ներքին էներգիայի:
4. Հարգածի հետևանքով համակարգի ընդհանուր իմպուլսը չի փոխվում:
5. Բախումից հետո գնդերը շարժվում են $v_0/2$ արագությամբ:
6. Բախումից հետո համակարգի իմպուլսը $2mv_0$ է:

Բ մակարդակ

- (46-47) Շղթայի տեղամասը կազմված է 2 մ երկարությամբ և $0,048 \text{ м}^2$ կտրվածքի մակերեսով պողպատե հաղորդալարից և նրան հաջորդաբար միացված 1 մ երկարությամբ, $0,021 \text{ м}^2$ կտրվածքի մակերեսով նիկելինե հաղորդալարից: Պողպատի տեսակարար դիմադրությունը $12 \cdot 10^{-8}$ Оմ·մ է, իսկ նիկելինինը՝ $42 \cdot 10^{-8}$ Оմ·մ:

46

Որքա՞ն է տեղամասի ընդհանուր դիմադրությունը:

47

Որքա՞ն լարում է ամիրաժեշտ կիրառել տեղամասի ծայրերին՝ $0,6 \text{ A}$ հոսանք ստանալու համար:

- (48-49) Առարկայի հեռավորությունը հավաքող բարակ ոսպնյակից $0,2 \text{ m}$ է, իսկ նրա իրական պատկերի հեռավորությունը ոսպնյակից՝ $0,8 \text{ m}$:

48

Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկեր 10^2 -ով:

49

Որքա՞ն է պատկերի խոշորացումը:

- (50-51) Մետաղը 0,5 մկմ ալիքի երկարությամբ մանուշակագույն լույսով լուսավորելիս նրանից պոկված էլեկտրոնները արգելակվում են 2 Վ լարման դեպքում: Պահելի հաստատունը $6,6 \cdot 10^{-34}$ Օ·Վ է, էլեկտրոնի լիցքի մոդուլը՝ $1,6 \cdot 10^{-19}$ Կ, լույսի արագությունը վակուումում՝ $3 \cdot 10^8$ մ/վ:

50

Որքա՞ն է մետաղի ելքի աշխատանքը: Պատասխանը բազմապատկեք 10^{21} - ով:

51

Որքա՞ն կլինի արգելակող լարումը, եթե մետաղը լուսավորվի 0,66 մկմ ալիքի երկարություն ունեցող կարմիր գույնի լույսով: Պատասխանը բազմապատկեք 10- ով:

- (52-53) Օդից ջուր անցնելիս 1 կՀց հաճախությամբ ձայնային ալիքի երկարությունը մեծացավ 0,66 մ-ով: Զայնի արագությունն օդում ընդունել 340 մ/վ:

52

Որքա՞ն է ձայնի ալիքի երկարությունը ջրում:

53

Որքա՞ն է ձայնի արագությունը ջրում:

(54-55) 1000 Ω/կգ.Կ տեսակարար ջերմունակություն ունեցող 0,5 կգ զանգվածով զազը 10 Կ-ով տարացնելիս նրա ներքին էներգիան աճեց 1000 Ω-ով:

54

Ի՞նչ ջերմաքանակ է հաղորդվել զազին:

55

Որքա՞ն է զազի կատարած աշխատանքը:

(56-58) Տատանողական կոնտուրի կոճի ինդուկտիվությունը $0,3 \text{ } \text{A}$ է, իսկ հոսանքի ուժի տատանումների լայնույթը՝ $4 \cdot 10^{-2} \text{ A}$:

56 Որքա՞ն է տատանողական կոնտուրի լրիվ էներգիան: Պատասխանը բազմապատկեք 10^5 - ով:

57 Որքա՞ն է կոճի մագնիսական դաշտի էներգիան, եթե հոսանքի ուժի ակնբարքային արժեքը 2 անգամ փոքր է լայնութայինից: Պատասխանը բազմապատկեք 10^5 - ով:

58 Որքա՞ն է կոնդենսատորի էլեկտրական դաշտի էներգիան, եթե հոսանքի ուժի ակնբարքային արժեքը 2 անգամ փոքր է լայնութայինից: Պատասխանը բազմապատկեք 10^5 - ով:

- (59-61) Սպորտային ավտոմեքենան մոդուլով հաստատուն 25 մ/վ արագությամբ շարժվում է ուռուցիկ կամրջով, որը 125 մ շառավղով շրջանագծի աղեղ է: Ազատ անկման արագացումը 10 մ/վ² է:

59

Որքա՞ն է ավտոմեքենայի կենտրոնաձիգ արագացումը:

60

Ավտոմեքենայի կշիռը քանի^շ անգամ է փոքր նրա ծանրության ուժից, եթե այն անցնում է կամրջի վերին ամենաքարձր կետով:

61

Որքա՞ն է ավտոմեքենայի ճնշման ուժը, որ նա գործադրում է կամրջի վրա, եթե մեքենան կամրջի կորության կենտրոնին միացնող ուղիղն ուղղաձիգի հետ կազմում է 60° անկյուն:

- (62-65) Հավաքող բարակ ոսպնյակից 10 սմ հեռավորությամբ գտնվող առարկայի իրական պատկերը ստացվում է 4 սմ բարձրությամբ: Եթե այդ առարկան գտնվում է ոսպնյակից 15 սմ հեռավորությամբ, նրա պատկերն ստացվում է 2 սմ բարձրությամբ:

62

Որքա՞ն է առարկայի բարձրությունը: Պատասխանը բազմապատկել 10^2 -ով:

63

Որքա՞ն է պատկերի հեռավորությունը ոսպնյակից՝ առաջին դեպքում: Պատասխանը բազմապատկել 10 -ով:

64

Որքա՞ն է պատկերի հեռավորությունը ոսպնյակից՝ երկրորդ դեպքում: Պատասխանը բազմապատկել 10^3 -ով:

65

Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել 10^2 -ով:

- (66-69) 6 լ տարողությամբ անոքում գտնվում է $2 \cdot 10^5$ Պա ճնշմամբ, 250 Կ ջերմաստիճանի միատոմ իդեալական գազ, իսկ 2 լ տարողությամբ անոքում՝ $4 \cdot 10^5$ Պա ճնշմամբ 500 Կ ջերմաստիճանի նույնպիսի գազ: Անոքները ջերմամեկուսացված են:

66 Որքա՞ն է առաջին և երկրորդ անոքներում գազի մոլեկուլների թվերի հարաբերությունը:

67 Ի՞նչ ճնշում կհաստատվի անոքներում, եթե դրանք միացվեն իրար: Պատասխանը բազմապատկել 10^{-4} -ով:

68 Որքա՞ն կլինի ջերմաստիճանն անոքներում, դրանք իրար միացնելուց հետո: Պատասխանը բազմապատկել 10 -ով:

69 Անոքներն իրար միացնելուց հետո որքա՞ն է մոլեկուլների կոնցենտրացիայի հարաբերությունը, մինչ իրար միացնելն առաջին անոքում մոլեկուլների կոնցենտրացիային:

R շառավղով հաղորդիչ գունդը լիցքավորված է զ լիցքով: Հաստատե՛ք կամ ժխտե՛ք հետևյալ պնդումները:

1. Գնդի ստեղծած էլեկտրական դաշտի ուժագծերն ուղղահայաց են գնդի մակերևույթին:
2. Գնդի ստեղծած էլեկտրական դաշտի համապոտենցիալ մակերևույթները համակենտրոն գնդոլորտներ են:
3. Գնդի ստեղծած էլեկտրական դաշտի լարվածությունը գնդի մակերևույթից հ հեռավորության վրա՝ $E = k \frac{q}{h^2}$:
4. Լիցքը հավասարաշափ կրաշխվի գնդի ամքող ծավալով:
5. Գնդի ներսում՝ կենտրոնից r ($r < R$) հեռավորության վրա, դաշտի լարվածությունը՝ $E = k \frac{q}{r^2}$:
6. Գնդի ներսում լիցքը բացակայում է: